



# Հակոբ Պարոնյան

## Ազգային շոշեր

ՊՕՂՈՍ ՊՈՅՆՈՒԷՅՐԻՅԵԱՆ

Հեզնելու վարժուած գրիչ մը երբ գովել ստիպուի՝ այն տպատրութիւնը կ'ընէ ընթերցողներուն վրայ, ինչ տպատրութիւն որ կ'ընէ հանդիսականներուն վրայ դերասան մը, որ Բուրստնեաք ներկայացնելու սորված ըլլալով՝ Մաքքեթի դերը կատարելու կը հարկադրուի:

Պոյնուէրիյեանի կեանքը գրելու համար գովելու արհեստը գիտցող գրիչ մը պէտք է: Ութուճեանի գրիչն քանի մը վայրկեանի համար փոխ առ, կ'ըսէր ինձ, առանց խորհելու, որ Ութուճեան վայրկեան մը չէ կարող բաժնուիլ գրիչէն: Բացի ասկից, անոր գրիչն ալ ծաղրելու վարժ է... Եւ ի՞նչ են չափազանց գովեստներն: Ես բնաւ չգովելով եւ ան չափազանց գովելով կը հաստատենք Արիստոտէլն, որ առաքինութիւնն երկու մոլութիւններուն մէջտեղը կը դնէ: Այս մոլութիւններէն մին կ'ըսէ, առաքինութեան պակասութիւնն է, իսկ միւսն՝ առաքինութեան չափազանցութիւնն: Եւ այսպէս առաքինութիւնն իմ գրչիս եւ Ութուճեանի գրչին միջեւ կը գտնուի... ասելի մօտ չկրնար գալ:

Ի՞նչ ընելու է ուրեմն, թո՞ղ տալու է, որ բարի մարդերն առանց յիշատակի անցնին երթան, որովհետեւ իմ գրիչս գովել չգիտեր: Բնա՛ւ երբեք: Այդ բարի մարդերն իմ գրչիս յարմարեցնելու համար անոնց վրայ թերութիւնն՞ը ստեղծելու է: Քաւ լիցի: Պատնասայ օրէնսդիրն իր ութերորդ երգիծանքին մէջ Աղեքսանդրին յիմար ըսած ըլլալուն համար՝ տեսէք ի՛նչպէս կը յանդիմանէ զինք Վովնարկ իր Աղեքսանդր եւ Տեբրէո վերնագրով գրած խօսակցութեան մէջ:

## ԱՂԵՔՍԱՆԴԻ

Էհ ուրեմն, բարեկա՛մ, միշտ նոյն ատելությունն ունի՞ս ինձի դէմ. երգիծանքներուդ մէջ նկարածիդ պէս միշտ յիմա՞ր կ'երեւամ քեզի:

## ՏԵԲԲԷՈ

Բնաւ երբեք, Տէր, զձեզ կը յարգեմ եւ ձեր առաքինությունները կը ճանաչեմ:  
Բարօրությունն ու շողոքորթություններն զձեզ ապականեցին, Բայց ազնիւ սիրտ մը եւ բարձր հանճար մը ունէիք դուք:

## ԱՂԵՔՍԱՆԴԻ

Ինչո՞ւ ուրեմն զիս յիմար եւ աւագակ ներկայացուցիր երգիծանքներուդ մէջ.  
Ճշմարիտ է, արդեօք, որ դուք բանաստեղծներդ միմիայն առասպելներու մէջ կը յաջողիք:

## ՏԵԲԲԷՈ

Բոլոր կեանքիս մէջ ասոր հակառակը պնդած եմ, եւ գրություններուս մէջ ցոյց տուած եմ, կարծեմ, որ ամէն սեռի մէջ ճշմարիտն է միայն գեղեցիկը:

## ԱՂԵՔՍԱՆԴԻ

Կը խոստովանիս, ուրեմն, որ զիս այնքան կծու կերպով պարսաւելու իրաւունք չունէիք:

## ՏԵԲԲԷՈ

Կ'ուզէի հանճարեղ բաներ գրելով՝ մարդերու զարմացումը գրաւել. կը փափաքէի մանաւանդ շողոքորթել ուրիշ իշխան մը, որ իւր պաշտպանութեանը տակ առած էր զիս: Այսչափ դիտաւորություններով, ինչպէս յայտնի է, չէի կարող անկեղծ ըլլալ:

Ես որ ուրիշ մը շողոքորթելու ոչ պարտք ունիմ եւ ոչ իրաւունք՝ ճշմարիտէն հեռանալու պատճառ մը չունիմ. եւ վստահ ըլլալով, որ ճշմարտությունն

իշխանութիւն ունի կամթտող գրիչին շոյել ալ սորվեցունել՝ կը յանդգնիմ այս անձին կեանքը գրել:

Արդ, հայր Պօղոս Պոյնուէրիյեան Միջագիող ծնած է 1805-ին: Իւր ծննդեամբն հերքած է այդ խօսքն, որով շատերը կ'ուզեն հաստատել, թէ փառասիրութիւնն մարդուս հետը կը ծնի, կը մեծնայ եւ կը մեռնի: Ծննդեան օրն երբ ներկայ եղողներն զինքը շոյելով եւ գգուելով կը հագցունէին՝ ինքը, փոխանակ ուռնալու իրեն եղած յարգանքներէն, այնպէս կը վարուէր, որ կարծես ըսել կ'ուզէր.

Եթէ գիտնայի, որ ձեզի այսչափ աշխատութիւն պիտի պատճառեն՝ բնաւ չէի գար աշխարհ:

Միջագիող անցուց իւր մանկութեան եւ պատանեկութեան տարիներն եւ 1820-ին Պէյրութ ուղեւորեցաւ Անտոնեան վանքն երթալու համար: Սոյն թուականին յոյն ծովահէններն ծովու վրայ ասպատակութիւն կ'ընէին եւ շատերը կը վախնային ծովէն ճամբորդութիւն ընելու: Պոյնուէրիյեան իրեն հասակակից տասնեւվեց ընկերներով սիրիւճի մը յանձնուեցաւ ցամաքէն Լիբանան երթալու համար: Իսկիւտարէն ճամբայ ելան եւ վեց ժամու չափ ճամբայ ընելէն ետքը հասան գիող մը, որուն քայնաքամն զիրենք ձերբակալել տուաւ, հասկնալու համար թէ ո՛վ էին այս տղաներն, ուսկի՛ց կը գային եւ ո՛ր կ'երթային, վասն զի ոչ ոք կրնար հաւտալ, որ ատոնք սիրիւճի մը յանձնուին Պէյրութ երթալու համար: Քայնաքամն գործն ստուգելէն ետքը, թող տուաւ զիրենք, որ նորէն ճամբայ ելան՝ ուրիշ գեղի մը մէջ ձերբակալուելու համար: Գաւառական իշխանութիւններն դիւցագնական քաջութեամբ կը գործեն միշտ, երբ հարկ ըլլայ ձերբակալել անմեղները: Վերջապէս ասոնք մինչեւ Պէյրութ երթալու համար քանի օրեան որ իջեւանեցան՝ ստիպուեցան իրենց վրայ տեղեկութիւն տալ, որպէսզի կարենան իրենց ճամբան շարունակել: Այսպէս վեց ամիս ճամբորդութիւն ընելէն ետքը՝ ողջ առողջ հասան Անտոնեան վանքը:

Վանք մտնելուն պէս ինքզինքն աշխատութեան տուաւ, եւ քիչ ժամանակին մէջ ուսաւ հայ, լատին եւ իտալերէն լեզուները: Իւր բարի վարքն առած դարձած էր ընկերներուն մէջ, որոնցմէ մին եթէ բերնէն գէշ խօսք մը փախցունէր, Պոյնուէրիյեան դասը կը թողոր, եկեղեցի կ'իջնար, ծունկ կը չոքէր եւ կ'աղօթէր Աստուծոյ, որ ներէ ընկերոջը յանցանքին: Վանքին մէջ իւր ուսումներն

ասարտելով վարդապետ ձեռնադրուեցաւ. սեւ հագուստներն, որ շատ անգամ կ'ապականեն մարդու սիրտն ու միտքը, բնաւ ազդեցութիւն չըրին եւ չփոխեցին ասոր ոչ միտքն եւ ոչ սիրտը:

Աբբահայրն հաւնելով ասոր բարի վարուցն եւ ազգի համար ունեցած սէրը տեսնելով, Պոլսոյ մէջ իրեն փոխանորդ կարգեց գայն, եւ հայր Պօղոս 1836-ին ատենները Պոլիս եկաւ: Մեծ յաջողակութեամբ եւ անձնանուիրութեամբ կատարեց իրեն յանձնուած սոյն պաշտօնը. սխալ հասկացողութեան մը պատճառ չտալու համար, շատ անգամ ինքն անձամբ Պէյրութ կ'ուղեւորուէր եւ վանք երթալով Աբբահօր ականջը քանի մը խօսք փսփսալէն ետքը, հետեւեալ օրը ճամբայ կ'ելնէր Պոլիս դառնալու համար: Յիսուն անգամ Պէյրութէն Պոլիս, Պոլիսէն Պէյրութ գնացած ու դարձած է:

1839-ին Միջագիւղի ս. Լուսաւորչայ եկեղեցոյ շինութիւնը լմնցած էր: Հոս կու գար շատ անգամ քարոզ խօսելու եւ ժողովուրդը կը վազէր մտիկ ընելու անոր խօսքերն: Այնքան քաջ կը խօսէր ազգասիրութեան վրայ, որ քարոզը մտիկ ընողներն դուրս ելնելուն պէս կը փափաքէին քանի մը օտարազգի բռնել ու ծեծել: Տղաներն իսկ կը սիրէին զինքը եւ ծնողք ասկից օգուտ քաղելով «Հայր Պօղոսն այսօր ձեր դպրոցը պիտի գայ» կ'ըսէին իրենց զաւակներուն, երբ ասոնք կու լային եւ չէին ուզեր դպրոց երթալ:

Ժամ է խոստովանելու, որ սա ինքն է ծնունդ տուող Հակահասունեան դատին: Լաւ կը ճանաչէր Հասունեան եւ անոր քաղաքականութիւնն եւ շատ աղէկ գիտէր ժողովուրդն անկէ զգուշացնելու եղանակը:

Հասունեան ալ կը ճանաչէր զինքն եւ շատ անգամ օձի կերպարանքով կը ներկայանար իրեն եւ խնձոր կու տար ըսելով, որ եթէ ասկէ ուտես պապի պէս անսխալ կ'ըլլաս, բայց հայր Պօղոսն ականջ չէր կախեր եւ իր առաջադրած նպատակին կը վազէր: Եթէ ուրիշներուն պէս անուն հանած չէ՝ պատճառն այն է, որ ինքն աւելի գործել կը սիրէ քան գործող երեւիլ: Ոչ պաշտօնապէս ամենէն աւելի աշխատած է Հակահասունեան դատին մէջ եւ դեռ կ'աշխատի գաղտնապէս:

Քիւբելեան դեռ պատրիարք չընտրուած, հայր Պօղոսն Հակահասունեաններուն ներկայացուցիչն էր: Բարձրաստիճան վիւբելա ներու ծանօթ եւ սիրելի էր: Ամէն օր Բ. Դուռը կ'երթար եւ ազգին ցաւերը ներկայացնելով դարման կը փնտռէր: Երբ հիւանդանոցն Հակահասունեաններուն ձեռքն անցաւ՝ Հասունեան հիւանդանոցին Թային ները չէր տար եւ հիւանդներն կը ստիպուէին անօթի մնալու, որպէսզի ստամոքսնին լեցուցելով հիւանդութիւննին չծանրանայ: Հայր Պօղոս իր գործունէութեամբն յաջողեցաւ այդ թային ներն Հասունեանէն առնելու:

1875-ին ժողովուրդէն երեք հազար ոսկոյ գումար մը հաւաքելով՝ Ֆերի-գիւղի գերեզմանատան շուրջը պատ քաշել տուաւ եւ ննջեցեալներուն ալ սիրտը գրաւեց:

Ժողովուրդն երեք անգամէն աւելի ուզեց, որ հայր Պօղոսն եպիսկոպոսութեան աստիճան բարձրանայ, ինքը մերժեց. բնաւ չսիրեր բարձրանալն անշուշտ վերջէն շխոնարհելու համար եւ եթէ չմեծնալն ալ իր կամքէն կախում ունենար, տասը տարեկանէն վեր չպիտի ուզէր ելնել:

Հայաստան աշխարհին վերածնութեանն ականատես ըլլալու փափաքն իր սիրտը հալումաշ կ'ընէ: Բնաւ առիթ չփախցուներ, թէ՛ բերանացի եւ թէ՛ գրով ազգայիններն միութեան եւ գործի յորդորելու: 1878-ին Առաջին քայլ բարոքման ազգիս հայոց ի Հայաստան աշխարհի վերնագրով տետրակ մը հրատարակեց, որով կը յորդորէր ազգայիններն երկրագործական վարժարաններ բանալ Հայաստանի մէջ: Հետեւեալ տողերը յիշեալ տետրակէն քաղելով կը հրատարակենք հոս ցոյց տալու համար մեր ընթերցողներուն՝ թէ այս ծերունին իր ալետր հասակին մէջ դեռ զգայուն սիրտ մը կը կրէ:

«Ի վերջ բանիցս նախ առ Ձեզ կը դիմեմ, պատկառելի պաշտօնեայք Հայաստանեայց Եկեղեցոյ՝ առ հասարակ յամենայն կարգէ եւ աստիճանէ: Ի Ձեզ հաւատացան ողորմելի ժողովրդեան ամէն հոգ եւ խնամքը: Ձեզմէ կախուած է անոնց երջանկութիւնը: Դուք միայն կարող էք զանոնք սփոփել, մխիթարել, եւ իրենց ըստ հոգոյ եւ ըստ մարմնոյ երջանիկ ապրելու օգտակար ճանապարհներն ցուցանելով՝ անոնց առաջնորդել: Պաշտօնակից եղբարք իմ սիրեցեալք, ի՞նչ է մեր կոչումը, բայց եթէ ժողովրդեան հոգսը ըստ ամենայնի: Ի՞նչ պիտի ըլլայ մեր նպատակը, բայց եթէ ժողովրդեան կատարեալ երջանկութիւնը: Դուք,

պաշտօնեայք եկեղեցոյ, դուք աւելի ի մօտոյ կը ճանաչէք գաւառաց մէջ գտնուող՝ ազգիս աղքատաց թշուառ վիճակը: Այս աղքատ ժողովուրդը Ձեր բերնէն կը սպասէ լսել՝ թէ ո՞րն է աստուածահաճոյ եւ հասարակաց բարոյն ազգօգուտ գործը, նպատակը եւ միջոցը: Ձեր բաժինը ժողովուրդն է եւ ժողովրդեան նուիրուած էք. ապա ժողովրդեան օգտին գործածեցէք Ձեր խօսքը, Ձեր ազդեցութիւնը, Ձեր միջնորդութիւնը եւ Ձեր օրինակը: Եւ ինչ աւելի օգտակար գործ քան թէ երկրագործութեան զարգացմամբ յարմատոյ բուժել ազգիս աղքատաց թշուառութիւնը»:

1879-ին հրատարակած է Գործ կայ, գործող չկայ անունով տետրակ մը: Այս հրատարակութեան պատճառ տուած են մայրաքաղաքիս մէջ պտտող անգործ երիտասարդներն, որոնք ուր որ հանդիպէին այս ծերունիին՝ իրմէ կամ գործ կ'ուզէին կամ ողորմութիւն: «Անհնար կ'ըլլայ ինձ, կ'ըսէ յիշեալ տետրակին մէջ, հանդարտ գլխով եւ խաղաղ սրտով քաղաքիս մէջ պտտիլ, ամէն կողմանէ խեղճութեան տխուր կերպարանք հետզհետէ դիմացս կ'ելնեն: Թող աղքատաց եւ մուրացկանաց բազմութիւնն, շատ մի ծանօթ անձինք ալ չորս կողմս կը խոնին, ոմանք ողորմութիւն կը խնդրեն, յայտնելով իրենց վերջին աղքատութիւնը եւ գաւակաց անօթութիւնը, ոմանք շահատր գործ կը փնտոնեն, ուրիշներն ալ ծանօթ էֆենտիից ձեռք պաշտաման մի հասնիլ կը հայցեն»:

Եւ արդարեւ հրատարակութիւն ընելէ ուրիշ ճամբայ չկայ խալսելու համար այն երիտասարդներէն, որոնք փողոցի մէջ, տան մէջ, ամէն օր, ամէն ժամ քովդ կու գան եւ կ'աղաչեն քեզի, որ քսան ոսկի ամսականով Ամերիկայի դեսպանատան մէջ գրագրութեան պաշտօն մը գտնես իրեն: Ոմանք կը փափաքին Եգիպտոսի թագուհի ըլլալ: Ոմանք հինգ հազար ոսկի կը պահանջեն, որ դրամագլուխ դնեն եւ վաճառականութեան սկսին: Շատերն ալ հարուստ վաճառականի մը աղջիկ կ'ուզեն: Հայր Պօղոսն ասոնց ամէնուն մէկէն պատասխանելու համար կ'ըսէ իրենց. գործ կայ, բայց գործող չկայ: Այս պատասխանն տալէն ետքը հետեւեալ հարցումները կ'ուղղէ.

«Մեր ազգին մէջ քանի՞ հացագործ կայ.

«Քանի՞ մսավաճառ կայ.

«Քանի՞ նպարավաճառ, գինեպան, կօշկակար եւ այլն կայ»:

Գրեթէ չկայ, եւ ըլլալիք ալ չունի. վասն զի կօշկակարութիւնն մեր պատուոյն կը դպչի, մսավաճառութիւնն ամօթ է, նպարավաճառութիւնը պգտիկութիւն է. թէպէտեւ սա ալ խոստովանելու պարտաւոր ենք, որ այսօր անգործ պտտողներուն եւ ոչ մին կրնայ մսավաճառ ըլլալ, ոչ ալ նպարավաճառ, թող որ դրամագլուխ չունին, այլ գրագրութենէ մսավաճառութեան երթալը քիչ մը դժուար է. վասն զի ամէն գործ, որչափ ալ դիւրին երեւնայ դուրսէն, գաղտնիք մունի իւր մէջ:

Շայր Պօղոս այս տեսրակը ձրի բաշխելով կը յորդորէր ազգայիններն, որ քիչ մ'ալ այս տեսակ գործերու աչք դարձունեն, գործեր, որովք օտարներն այսօր մեծ հարստութիւններ դիզած են եւ Բերայի մէջ հոյակապ տուներ կանգնած են: Մեր գաւակները պգտիկ հասակէն վարժեցնելու է այդ արուեստներու, վասն զի քառասուն տարի գրագրութեամբ կամ ուրիշ պաշտօնով զբաղած մէկու մը խիստ դժուար է կօշիկի, գինիի եւ այլն արհեստը սորվիլը:

Բնաւ յոգնիլ չգիտեր, առաւօտէ մինչեւ երեկոյ կը քալէ: Մեծութիւնը չսիրելուն պատճառաւ մեծ փողոցներն ալ չսիրեր. եթէ Բերա հանդիպես իրեն՝ կամ մէկ փողոցէն կը մտնէ կամ ուրիշ փողոցէ մը կ'ելնէ: Բժիշկներն իւր մէկ ծուխին ապսպրած ըլլալով, որ երբեմն անտառներն երթայ եւ մարմնամարգութիւն ընելու համար սղոցով ծառեր կտրէ, ինքն ալ ծուխին հետ մէկտեղ շատ անգամ անտառները կ'երթայ եւ ծառի մը վրայ ելնելով կը սկսի անոր ճիւղերը կտրել. բայց կը զգուշանայ կտրել այն ճիւղն, որու վրայ կեցած է: Պտտիլը շատ սիրելուն համար է, որ Բարիզի եւ Լոնտրայի ամէն արուեստահանդէսներու ներկայ գտնուած է: Եւրոպան ամբողջ պտտած է, օր մ'ալ անշուշտ Ամերիկա պիտի երթայ:

Ուրիշ կրօնատրոններու պէս չէ, որ միշտ հարուստներուն տուները պտտի եւ աղքատներն ոտնակոխ ընէ: Շատ անգամ աղքատին խրճիթը կը մտնէ, որբերուն արցունքը կը սրբէ եւ կը մխիթարէ զանոնք. ինչպէս ամիրա ներուն՝ նոյնպէս ալ աղքատներուն սիրելի է:

Խօսակցութիւնն անուշ է, շատ անգամ գուարճախօս է, պզտիկ առակներ կը պատմէ: Եթէ քաղաքավարութիւնն արգիլէ զինքն երբեմն համարձակօրէն խօսելու՝ առակի կը դիմէ եւ անով կը բացատրէ իւր միտքը: Այս առակն մեծ դիրութիւն կու տայ երբեմն մեր կարծիքը յայտնելու: Մեր դիմացինը կաղնիի, կամ կովու, կամ ասանակի նմանցնելով կրնանք համոզել առանց անոր անձնականութեան դպած ըլլալու, մինչդէռ եթէ առանց առակի մէկուն կաղնի ըսելու ըլլանք՝ անոր անձնականութիւնը վիրատրած կ'ըլլանք:

Ներող է: Հրացան մը պարպէ վրան, եւ երբ ոստիկանութիւնը գայ զքեզ ձերբակալելու՝ ինք առաջ կը նետուի եւ կ'ըսէ.

Զիս բռնեցէք:

Այս ըսելէն ետքը՝ խիղճը կը սկսի զինք տանջել, թէ ինչո՞ւ աշխարհիս վրայ գտնուի մարդ մը, որ իր վրայ հրագլէն պարպէ: Խիղճը հանդարտեցնելու համար գիշերանց անկողինէն կ'ելնէ, լապտերը կը վառէ եւ այն մարդն կը գտնէ, քովը կը նստեցունէ եւ կը սկսի խրատել գայն, որ ուրիշ անգամ ասանկ ոճիր մը չգործէ: Եթէ քովը դրամ ունենայ՝ կը հանէ անոր կու տայ, որ իւր տուած խրատները գործադրէ:

Կարծեսց ազատութեան յարգող է: Գնա իրեն գրուցէ, որ ածուխին գոյնը ճերմակ է, բնաւ չարդողիր եւ թող կու տայ, որ փաստերովդ չորս ժամ գլուխը ցաւցունես: Սկեպտիկեանի մը պէս վայրկեան մը կ'ըսէ մտքէն, «Թերեւս ածուխը ճերմակ է եւ ինձի սեւ կ'երեւայ». իսկ երբ խօսքդ աւարտես՝ կը սկսի պատասխանել եւ զքեզ համոզելու աշխատիլ: Պնդէ իւր առջելը, թէ Էնֆիեճեան առաքինի մէկն է. պաղարեամբ մտիկ կ'ընէ զքեզ եւ վերջը կը սկսի հերքել կարծիքդ. իսկ երբ կը տեսնէ, որ կարծեսցդ մէջ հաստատ ես՝ չստիպեր զքեզ կարծիքդ փոխելու, եւ «երկուքս ալ իրաւունք ունինք» ըսելով՝ խօսքը կը վերջացունէ: Իրաւունքը հիմա ճաշակի տեղ անցած է, ամէն մարդ ազատ է այսօր խնդրոյ մը վրայ ամէնէն այլանդակ կարծիքը յայտնել առանց կարմրելու, ինչպէս որ թեթեւ երիտասարդ մը ազատ է ամենատղեղ գոյնով տձեւ թիկնոց մը հագնելու, ինչպէս որ ուրիշ մը ազատ է սոխով եփած միսը կամ միսով եփած սոխն ուրիշներու յանձնարարել:



Հոս կը դադրինք ա՛լ համրելէ այն բոլոր բարեմասնութիւնները, զորս ունի հայր Պօղոս, որուն Ազգային ջոշերու մէջ գտնուիլն անշուշտ բերկրութիւն պիտի պատճառէ մեր ընթերցողներուն, երբ պիտի տեսնեն ասոնք, ազգին մէջ կան այնպիսի կրօնատրոններ, որ ամէնու սիրոյն եւ յարգանացն արժանի են: Թերեւս շատերը հետաքրքիր ըլլան հասկնալ, թէ ինչո՞ւ Լուսինեանէ, հրաշագործէ եւ Հասունեանէ ետքը գրեցինք այս ծերունայն կեանքը: Դիտմամբ ետ թողուցինք, ասպացուցանելու համար՝ թէ լոյսը խաւարէն ետքը կու գայ:

Հայր Պօղոս բարակ կազմով, ճերմակ մազերով եւ ճերմակ մօրուքով ծերունի մէ: Հակառակ իր ծերութեանը առանց յոգնելու օրը քանի մը անգամ Բերայէն Բ. Դուռը կրնայ քալելով երթալ գալ, ինչպէս արդէն կու գայ Հակահասունեաններուն գործին համար: Իւր դէմքը գրաւիչ է եւ կը յիշեցունէ մեզ առաքեալին այն օրուան դէմքն, ուր իր վարդապետին կ'ըսէր.

Ամբողջ գիշեր աշխատեցանք ու բան մը չկրցինք բռնել: